



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
 Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
 էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«10» նոյեմբերի 2016 թվական N 212-Ա

**«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ
 ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Շիրակացու փողոցի N 162 հասցեի անշարժ գույքը վարձակալության է տրամադրված «Ճերմակ հիվանդանոց» սահմանափակ պատասխանատվության ընկերությանը: Ընկերության տնօրենը դիմել է գույքի 205,72 (երկու հարյուր հինգ ամբողջ յոթանասուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով տարածք վարձակալությունից հետ վերցնելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, հիմք ընդունելով «Ճերմակ հիվանդանոց» սահմանափակ պատասխանատվության ընկերության տնօրենի և «Հայկական կարմիր խաչի ընկերություն» հասարակական կազմակերպության ղեկավարի գրությունները (համայնքապետարանում մուտքագրված համապատասխանաբար՝ 2016թվականի նոյեմբերի 1-ին N 13418 և նոյեմբերի 7-ին N 13675 թվագրություններով)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Շիրակացու փողոցի N 162 հասցեի գույքի գլխավոր մասնաշենքից առանձնացնել 205,72 (երկու հարյուր հինգ ամբողջ յոթանասուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով տարածք և այն հետ վերցնել «Ճերմակ հիվանդանոց» սահմանափակ պատասխանատվության ընկերության վարձակալությունից:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 205,72 (երկու հարյուր հինգ ամբողջ յոթանասուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով տարածքը 5 (հինգ) տարի ծամկետով անհատույց օգտագործման տրամադրել «Հայկական կարմիր խաչի ընկերություն» հասարակական կազմակերպությանը:

3. «Ճերմակ հիվանդանոց» սահմանափակ պատասխանատվության ընկերության հետ կնքված վարձակալության պայմանագրում կատարել համապատասխան փոփոխություններ և «Հայկական կարմիր խաչի ընկերություն» հասարակական կազմակերպության հետ կնքել տարածքի անհատույց օգտագործման պայմանագիր:

Կողմ (17)

Դեմ (0)

Ձեռնպահ(0)

- Ս. Բալասանյան
- Ա. Աղամյան
- Հ. Կարապետյան
- Լ. Խաչատրյան
- Է. Մկրտչյան
- Տ.Հովհաննիսյան
- Մ. Սահակյան
- Լ. Սանոյան
- Վ. Եղիգարյան
- Ա. Գրիգորյան

Վ. Հունանյան
Գ. Սարգսյան
Կ. Միքայելյան
Տ. Փանոսյան
Գ. Գրիգորյան
Կ. Թաթարյան
Ա. Տոնոյան

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ԾԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ք. Գյումրի
«10» նոյեմբերի 2016թ.



Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

Ռ. ԱՄԱՏՐՅԱՆ